ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ

ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՔՈԼԵՋ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ՝ «ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ՝ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԽՈՐԱՑՎԱԾ ԻՄԱՑՈՒԹՅԱՄԲ»

ԹԵՄԱ՝ «ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ»

Ուսանող՝ Թամարա Մանուկյան
Ղեկավար՝ Տիգրան Զոհրաբյան

ԵՐԵՎԱՆ 2024

Բովանդակություն

1.Ներածություն
2. Գլուխ I
3. 1.1. «Մշակութային զբոսաշրջություն» սահմանումը, դրա հիմնական բնութագրերն ու առանձնահատկությունները
4. 1.2. Մշակութային զբոսաշրջության պատմությունը
5. 1.3. Մշակութային զբոսաշրջությունը աշխարհում
Գլուխ II
6. 2.1. Մշակութային զբոսաշրջությունը Հայաստանում
7. 2.2. SWOT վերլուծություն
8. Գործնական մաս
9. Եզրակացություն
10. Գրականության ցանկ

Ներածություն

Դիպլոմային աշխատանքի թեման է մշակութային զբոսաշրջությունը, քանի որ զբոսաշրջության այս տեսակը շատ կարևոր ու բաղկացուցիչ մաս է յուրաքանչյուր երկրի համար, մասնավորապես՝ Հայաստանի համար: Աշխատանքը իրականացվել է՝ուսումնասիրելով աշխարհի երկրների մշակութային զբոսաշրջության պատմությունը, ակունքներն ու զարգացման փուլերը: Անդրադարձել ենք հայկական մշակույթին ու այն ժառանգությանը, որի վրա կառուցվել է մշակութային զբոսաշրջությունը: Դիպլոմային աշխատանքում անդրադառնում ենք «մշակութային զբոսաշրջություն» հասկացությանը և պատմությանը, Հայաստանի մշակութային զբոսաշրջության, դրա ներուժի ու զարգացման հեռանկարներին, ինչպես նաև՝ անդրադարձել ենք աշխարհի մշակութային զբոսաշրջությամբ առաջատար մի քանի երկրի մշակութային արժեքներին: Դիպլոմային աշխատանքի նպատակն է դիտարկել մշակութային զբոսաշրջության դերը Հայաստանում: Հայաստանում զբոսաշրջությամբ զբաղվող անձանց հետ հարցումների միջոցով փորձել ենք հասկանալ Հայաստանում մշակութային զբոսաշրջության զարգացման մակարդակը, խնդիրները և այլն: Թեմայի արդիականությունն այն է, որ մշակութային զբոսաշրջության պահանջարկը շատ է Հայաստանում, ինչն էլ ապահովում է զբոսաշրջիկների մեծ հոսք: Թեման արդիական է՝ կապված հիմնական ուղղություններից դուրս, ավելի նոր ու հետաքրքիր վայրերի հետ: Տարածաշրջանի վերաբերյալ խորացված ուսումնասիրությունները նպաստում են նոր վայրերի բացահայտմանն ու նոր ուղղությունների ավելացման, ինչպես նաև՝ մշակութային զբոսաշրջության ոլորտում առկա խնդիրների հանրայնացմանը:

Գլուխ I

1.1. Ի՞նչ է մշակութային զբոսաշրջությունը

Մշակութային զբոսաշրջությունը զբոսաշրջության ամենակարևոր ու ճանաչողական տեսակներից մեկն է: Համաձայն ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության՝ մշակութային զբոսաշրջությունը «մարդկանց տեղաշարժն է հիմնականում մշակութային դրդապատճառներով,ինչպիսիք են ուսումնական ճամփորդությունները դեպի փառատոններ և այլ մշակութային միջոցառումներ, այցելություններ մշակութային վայրեր և հուշարձաններ, ճամփորդություններ՝ բնությունն ուսումնասիրելու համար, բանահյուսություն կամ արվեստ, և ուխտագնացություններ»: Մշակութային զբոսաշրջության շրջանակներում կարող ես ճամփորդել տարբեր երկրներ՝ դրանք ճանաչելու և հետազոտելու համար: Զբոսաշրջիկներին հետաքրքրում է հատկապես տվյալ երկրի պատմությունը, պատմամշակութային ու տեսարժան վայրերը, խոհանոցը և այլն: Մշակութային զբոսաշրջությունը ընդգրկում է ճանապարհորդություններ դեպի քաղաքային վայրեր՝ մասնավորապես պատմական մեծ քաղաքներ և մշակութային նշանակություն ունեցող կառույցներ, ինչպիսիք են օրինակ՝ թանգարանները, թատրոնները, եկեղեցիները, վանքերը և այլն: Այն կարող է նաև ներառել զբոսաշրջությունը գյուղական վայրերում, որը ներկայացնում է բնիկ ցեղերի սովորույթները, կենսակերպը, ծեսերն ու ավանդույթները: Համարվում է, որ մշակութային զբոսաշրջիկները ավելի շատ գումար են ծախսում, քան սովորական զբոսաշրջիկները: Մշակութային տուրիզմը գնալով դառնում է ավելի հայտնի և տարածված ամբողջ աշխարհում: Բացի այդ, այն կարևոր դեր է խաղում այցելվող վայրերի զարգացման և հարստացման գործում:

Մշակութային զբոսաշրջությունը զբոսաշրջության մի բաժին է, որը վերաբերում է այն զբոսաշրջիկներին, որոնք հետաքրքրվում են այլ երկրների կամ շրջանների մշակույթով, տեղացիների կենսակերպով, պատմությամբ, կրոնով, ճարտարապետությամբ, արվեստով և այլ բնագավառներով: Մշակութային զբոսաշրջությունը, որպես ճանապարհորդության մի տեսակ, իր մեջ ներառում է մշակութային տարբեր տարրեր, որոնք տարբերվում են մարդու մշտական բնակության վայրի մշակութային շրջապատից:

Դասակարգումը.

Ըստ տեսարժան վայրերի տեսակների.

- պատմական
- ճարտարապետական
- մշակութային այգիներ
- քաղաքային միջավայր
- երաժշտական և պարային փառատոններ

- արվեստ և գրականություն

Ըստ մշակութային բաղադրիչի կարևորության.

- պրոֆեսիոնալ (մշակութային գործիչների գործնական շփումների հիման վրա)
- մասնագիտացված (նպատակաուղղված ծանոթություն ուսումնասիրվող օբյեկտի հետ)
- չմասնագիտացված (ճանաչման նպատակով մշակութային բարիքների օգտագործում)
- ուղեկցվող (որպես լրացուցիչ տուրիստական նպատակներ)

Ըստ մշակութային ռեսուրսների օգտագործման.

- ժառանգության տուրիզմ (պատմամշակութային)
- ընդհանուր (մշակութային-ճանաչողական կամ էքսկուրսիոն)
- արվեստի տուրիզմ (նկարչական արվեստի հանդեպ հետաքրքրություն)
- մշակութային-իրադարձային
- կրեատիվ մշակութային (հետաքրքրություն սեփական ստեղծագործական և հոգևոր զարգացման նկատմամբ)
- էկոմշակութային (նոր մշակութային փորձի ձևավորում, օրինակ, տեղացի մարդկանց ընտանիքում մնալը և այլն)
- տպավորությունների զբոսաշրջություն (ներթափանցել կոնկրետ մշակութային վայրի և ժամանակի մեջ)
- թեմատիկ (ձևավորված մեկ թեմայի շուրջ)

Ժամանակակից մշակութային զբոսաշրջությունը փորձում է ստեղծել իդեալական կոնտրաստ, փորձում է համատեղել, այսինքն՝ ընդգծում է դրա նյութական բաղադրիչը (շենքեր, կառույցներ, արտեֆակտեր, արվեստի գործեր և այլն) և ոչ նյութական բաղադրիչը (ավանդույթներ, գաղափարներ, համոզմունքներ, վարքագծի նորմեր, խորհրդանիշներ, լեզու և այլն): Այս առումով ցանկացած մարդու համար մշակութային զբոսաշրջությունը ոչ միայն մշակութային օբյեկտի հետ ծանոթանալու, այլև դրա մեկնաբանությունը հասկանալու, դրա համատեքստը գնահատելու հնարավորություն է:

Մշակութային զբոսաշրջության շնորհիվ զբոսաշրջիկները ծանոթանում են մշակութային օբյեկտների ու մշակութային արժեքների հետ և ընդլայնում իրենց մշակութային հորիզոնը: Զբոսաշրջիկը միաժամանակ ստանում է այն գիտելիքը, որը բավարարում է սեփական մշակութային կարիքները: Մշակույթը զբոսաշրջության զարգացման կարևոր գործոն է: Մշակութային առումով զբոսաշրջությունն իր ազդեցությունն է թողնում մարդու կյանքի տարբեր ոլորտների, արժեհամակարգի,

հասարակության գիտելիքների և վարքագծի վրա: Մշակութային զբոսաշրջությունը նպաստում է մարդու ներաշխարհի զարգացմանը՝ ընդլայնելով նրա մտահորիզոնը, ճանապարհորդը հնարավորություն է ստանում ծանոթանալ տարբեր մշակույթների և տարբեր ժողովուրդների էթնիկ ժառանգության հետ:

Մշակութային զբոսաշրջության առանձնահատկությունները

Մշակութային զբոսաշրջության հիմնական հատկանիշը տարբեր մշակույթների հանդեպ խորը գնահատանքն է: Ճանապարհորդները ոչ միայն այցելում են մի վայր՝ տեսնելու նրա բնական կամ ճարտարապետական գեղեցկությունը, այլև խորասուզվելու նրա մշակույթի մեջ և հիմնովին հասկանալու այն: Մյուս կարևոր հատկանիշը մշտական կրթական բաղադրիչն է, որն առկա է այս տեսակի ճամփորդության մեջ: Մշակութային ժառանգության նկատմամբ հարգանքը ևս մեկ անփոխարինելի պայման է մշակութային զբոսաշրջիկի համար, քանի որ այցելում են ոչ միայն ամենահայտնի զբոսաշրջային վայրերը, այլև տեղական համայնքների համար մեծ նշանակություն ունեցող վայրեր, ինչպիսիք են բնական վայրերը, հին քաղաքակրթությունների ավերակները կամ կրոնական վայրերը: Դրանք նախնիների պատմություններ ու ավանդույթներ պահող տարածքներ են, որոնք պետք է արժևորվեն ու պահպանվեն մեծագույն խնամքով: Ընդհանրապես, զբոսաշրջության ցանկացած տեսակ կարելի է մշակութային համարել: Այսպիսով, մշակութային զբոսաշրջության նպատակը տարբեր ժողովուրդների և երկրների մշակութային ժառանգության մասին գիտելիքներ ձեռք բերելն է: Մշակութային զբոսաշրջությունը հսկայական դեր է խաղում մշակութային ժառանգության պահպանման ու վերականգնմանը, երկրում գեղարվեստական կյանքի զարգացմանը՝ նպաստելով երկրի կրթական և մշակութային մակարդակի բարելավմանը:

Մշակութային զբոսաշրջությունը ունի դրական ու բացասական կողմեր: Մշակութային զբոսաշրջության դրական կողմերը շատ են, որոնցից են՝ մշակույթների և արվեստների վերակենդանացումը: Մյուսը ժառանգության պահպանումն է: Շատ զբոսաշրջիկներ այցելում են ուղղություն՝ հատկապես տեսնելու տվյալ երկրի տեղական ժառանգությունը: Հենց այս պատճառով է, որ շատ երկրներ ջանքեր կգործադրեն իրենց երկրի ժառանգությունը պահպանելու համար: Ցավոք, զբոսաշրջության արդյունքում շատ փոփոխություններ կան, որոնք ցանկալի չեն: Ամբողջ աշխարհում կան բազմաթիվ օրինակներ, որոնք փոխվել են զբոսաշրջության պատճառով: Հավանաբար, տեղի բնակիչները փոխել են իրենց խոսելաձևը կամ հագնվելու ոճը: Թերևս, զբոսաշրջիկների պատճառով տեղացիները ծանոթացել են ալկոհոլի հետ կամ նեղացել հարուստ զբոսաշրջիկից ու դիմել հանցագործության:

1.2. Մշակութային զբոսաշրջության պատմությունը

Հնում մարդիկ ճամփորդում էին բացառապես առևտրի նպատակով, ուստի զբոսաշրջություն որպես այդպիսին չէր իրականացվում: Մշակութային զբոսաշրջությունը լայնորեն տարածվեց 20-րդ դարի երկրորդ կեսին, երբ շատ զարգացած երկրներ արդյունաբերականից տեղափոխվեցին հետինդուստրիալ հասարակություն: Այդ ժամանակվանից ի վեր ի հայտ եկավ մշակութային ժառանգության ընկալումը՝ պատմական, ռազմական, գրական և գեղարվեստական առումով: Մշակութային զբոսաշրջությունը երբեմն համարում են զբոսաշրջության հիմքը: Ներկայումս լայն տարածում ունի մշակութային և կրթական զբոսաշրջությունը: 80-ականներին ակադեմիկոս Դ. Ս. Լիխաչևը շեշտեց, որ մարդկային կյանքի պահպանման համար դա պակաս կարևոր չէ, քան բնական, կենսաբանական, իր նախնիների և իր մշակույթի կողմից ստեղծված միջավայրը:

Զբոսաշրջության շատ կարևոր ճյուղերից մեկը համարվում է մշակութային զբոսաշրջությունը: Շատ մարդիկ երկիր ընտրելուց, մեծ ուշադրություն են դարձնում պատմամշակութային վայրերին, տվյալ երկրի պատմությանը, ու ինչքան հետաքրքիր լինի ներկայացված երկրի անցյալի պատմությունը, այդքան զբոսաշրջիկը ավելի շատ է նախընտրում հենց այդ երկրին: «Մշակութային զբոսաշրջություն» տերմինը հայտնվել է համեմատաբար վերջերս՝ 80-ական թվականներին, և առաջացել է այսպես կոչված «ժառանգության տուրիզմից», մի երևույթ, որը շատ պատճառներով մեծ տարածում էր գտել այսօր ամբողջ աշխարհում: Գրավչության օբյեկտներն են ոչ միայն տարածքի մշակութային լանդշաֆտը, արվեստը, մշակութային և պատմական ժառանգությունը, այլև այս տարածաշրջանում ապրող մարդկանց կենսակերպը, ավանդույթները, սոցիալական միջավայրը և այլն: Ժամանակակից մշակութային զբոսաշրջությունը փորձում է ստեղծել իդեալական կոնտրաստ, փորձում է համատեղել, այսինքն՝ ընդգծում է դրա նյութական բաղադրիչը (շենքեր, կառույցներ, արտեֆակտներ, արվեստի գործեր և այլն) և դրա ոչ նյութական մասը(ավանդույթներ, վարքագծի նորմեր, համոզմունքներ, գաղափարներ, խորհրդանիշներ, լեզու և այլն): Մշակութային զբոսաշրջության զարգացման համար բավարար չէ ունենալ հարուստ մշակութային ժառանգություն: Տեղի բնակչության ակտիվ մասնակցությունը քաղաքի մշակութային կյանքում այսօր նախապայման է մշակութային զբոսաշրջության զարգացման համար:

1.2. Մշակութային զբոսաշրջությունը աշխարհում

Մշակութային զբոսաշրջությունը աշխարհի հինգ երկրներում

Առանձնացրել ենք մեր հարևան երկրներից Թուրքիան, Իրանը և Վրաստանը, նաև՝ աշխարհի առաջատար երկրներից՝ Հունաստանը, Իտալիան ու Ֆրանսիան.

1. Թուրքիա

Թուրքիան աշխարհի տարբեր ծայրերից զբոսաշրջիկների համար ամենահայտնի ուղղություններից մեկն է: Այն մի երկիր է, որն առաջարկում է տարբեր զբաղմունքներ և տեսարժան վայրեր, ինչպես նաև՝ հարուստ մշակույթ ու պատմություն: Թուրքիայի պատմությունը ավելի քան 10.000 տարվա վաղեմություն ունի: Այս երկիրը եղել է բազմաթիվ քաղաքակրթությունների տուն (հույները, հայերը, հռոմեացիները, պարսիկները, բյուզանդացիներն ու օսմանցիները): Սա նշանակում է, որ Թուրքիան ունի բազմաթիվ պատմամշակութային տեսարժան վայրեր: Թուրքիայի գլխավոր տեսարժան վայրերից մեկը Ստամբուլ քաղաքն է: Այս քաղաքը եղել է երեք կայսրությունների մայրաքաղաքը՝ հռոմեական, բյուզանդական և օսմանյան: Այստեղ դուք կգտնեք բազմաթիվ պատմական վայրեր, ինչպիսիք են Կապույտ մզկիթը, Սուրբ Սոֆիայի տաճարը և Թոփքափի պալատը: Բացի Ստամբուլից, Թուրքիան առաջարկում է բազմաթիվ այլ տեսարժան վայրեր: Դրանցից մեկը Կապադովկիան է՝ եզակի շրջան՝ գեղեցիկ լանդշաֆտներով և յուրահատուկ ժայռային գոյացություններով: Այստեղ դուք կարող եք զբոսնել օդապարիկով կամ քայլել ստորգետնյա քաղաքներով: Թուրքիայի մշակույթը շատ հարուստ է և բազմազան: Սա դրսևորվում է սննդի, երաժշտության, պարի և կրոնի մեջ: Թուրքական մշակույթում մեծ դեր ունի նաև կրոնը: Թուրքերի մեծ մասը մուսուլմաններ են, ուստի կարող եք տեսնել բազմաթիվ մզկիթներ և այլ կրոնական շինություններ:

2. **Իրան**

Իրանը, որի տարածքը լի է պատմամշակութային հուշարձաններով՝ինչպես նաև՝ իր բնական առանձնահատկություններով, համարվում է զբոսաշրջիկներին հետաքրքրող հնագույն երկրներից մեկը: Պատմական տարբեր դարաշրջանների պատմական հուշարձաններ, ներառյալ իրանական բարձրավանդակի հնագույն մարդկային վայրերը, ծովային ափերի, լեռների, տափաստանների և անապատների բազմազան բնական լանդշաֆտների, ինչպես նաև՝ պատմական ճարտարապետական հուշարձանները, որոնք երկրի մշակութային և կրոնական մաս են կազմում: Իրանի հնագույն պատմությունը, աշխարհագրական դիրքը, Մետաքսի ճանապարհը, որպես կապող օղակ Արևելքի և Արևմուտքի միջև, որոշեցին Իրանի վերածվելը ամենահայտնիներից մեկի: Հատկանշական հնագույն մշակույթը, որը միահյուսված է իսլամական մշակույթին, երկրին ավելի մեծ նշանակություն է տալիս,

և հատկապես վերջին տարիներին Իրանը աճող հետաքրքրությամբ է դիտվում գիտնականների, սոցիոլոգների և հետազոտողների, ինչպես նաև՝ երկիր այցելել ցանկացող հետաքրքրասեր զբոսաշրջիկների կողմից: Պահպանվել են բոլոր տեսակի հուշարձանները, Իրանի մշակույթի և հնագույն քաղաքակրթության զարգացման վկայությունները, որոնք կարող են դառնալ զբոսաշրջիկների ուշադրությունը գրավող օբյեկտներ: Այս արժեքավոր հուշարձաններից ամենակարևորներն են՝ Համադանի պահպանված առարկաները, Մետաքսի բլուրը՝ Քաշանում, Մարլիկը՝ Ռուդբարում, Չոգարնաբիլը՝ Փասարգադայում, Շուշը, պալատները և այլ հնագույն մոնումենտալ շինություններ, այդ թվում՝ Թախտե Ջամշիդը, Պերսեպոլիսը, Ապադանան, հնագույն շինությունները, գեղեցիկ մզկիթները:

3. Վրաստան

Վրաստանի բնապատկերները եզակի մշակութային հուշարձաններ են, որոնք արտացոլում են այս բարդ տարածաշրջանի հնագույն պատմությունը: Դարեր շարունակ Վրաստանը շրջապատված էր տարբեր խոշոր կայսրություններով, որոնք զգալի ազդեցություն են ունեցել երկրի վրա, բայց միևնույն ժամանակ վրաց ժողովուրդը կարողացել է ստեղծել և պահպանել իր յուրահատուկ մշակույթը, ավանդույթներն ու սովորույթները, որոնք այսօր զարմացնում են զբոսաշրջիկներն: Այսօր Վրաստանի էքսկուրսիաները հյուրերին ներկայացնում են այս հյուրընկալ երկիրը՝ մարդկանց կյանքի տարբեր ասպեկտներով, նրանց մշակույթով, պատմությամբ և հարուստ հոգևոր ժառանգությամբ: Վրաստանն առաջիններից մեկն էր, որ հռչակեց քրիստոնեությունը որպես պետական կրոն՝ դրանով իսկ նշանավորելով երկրում մշակութային զարգացման նոր փուլի սկիզբը: Վրաց ժողովրդի հոգևոր ժառանգությունը լավագույնս արտացոլված է բազմաթիվ հին քրիստոնեական տաճարներով, եկեղեցիներով և վանքերով: Միջնադարյան վրացի վարպետների ստեղծած տաճարները հիացնում են իրենց գեղեցկությամբ և ճարտարապետական ձևերով: Վրաստանի տեսարժան վայրերի փոքրիկ ցանկ՝ Թբիլիսի (Հին քաղաք) Մցխեթա քաղաքը և Սվետիցխովելի տաճարը, Ջվարիի վանք, Անանուրի ամրոց, Վարձիայի քարանձավային վանական համալիր:

4. Իտալիա

Իտալիայի մշակութային պատմությունն ընդգրկում է հին ժամանակաշրջանը, միջնադարը և ժամանակակից դարաշրջանը: Դասական հնությունից ի վեր իտալական թերակղզում բնակվել են հին էտրուսկները, տարբեր իտալական ժողովուրդներ (լատինները, սամնիտները և ումբրիները), կելտերը և այլ հին ժողովուրդներ: Հնում Իտալիան հռոմեացիների հայրենիքն էր և Հռոմեական

կայսրության գավառների մետրոպոլիան: Հռոմը՝ որպես թագավորություն, հիմնադրվել է մ.թ.ա. 753 թվականին և հանրապետություն է դարձել մ.թ.ա. 509 թվականին, երբ Հռոմի միապետությունը տապալվեց՝ հօգուտ Սենատի և ժողովրդի կառավարության: Այնուհետև Հռոմեական Հանրապետությունը միավորեց Իտալիան թերակղզու էտրուսկների, կելտերի և հույն գաղութարարների հաշվին: Հռոմեական կայսրությունը դարեր շարունակ գերիշխում էր Արևմտյան Եվրոպայում և Միջերկրական ծովում՝ անչափելի ներդրում ունենալով արևմտյան փիլիսոփայության, գիտության և արվեստի զարգացման գործում: 476 թվականին Հռոմի անկումից հետո Իտալիան մասնատված էր բազմաթիվ քաղաք-պետությունների և տարածաշրջանային քաղաքականությունների մեջ: Այսօր Իտալիան ամենահին և հետևաբար, հայտնի երկրներից մեկն է և ունի օտարերկրյա զբոսաշրջիկների ընդունելու հսկայական փորձ: Իտալիան հնարավորություն է տալիս կազմակերպել գրեթե բոլոր տեսակի ճամփորդություններ ողջ տարվա համար: Պատմական, մշակութային և ժամանցային վայրեր այցելելը Իտալիա ժամանող զբոսաշրջիկների մեծ մասի հիմնական նպատակն է: Էքսկուրսիաների երթուղիները, որպես կանոն, ներառում են հնագիտական և պատմական հուշարձաններ, լանդշաֆտներ և արգելոցներ, կրոնական վայրեր, գինեգործարաններ, բերդեր և թանգարաններ: Իտալական քաղաքներում էքսկուրսիոն տուրերը նախատեսված են գեղեցկության և պատմության իսկական գիտակների համար, ովքեր ցանկանում են ճանաչել քաղաքը հանգիստ մթնոլորտում:

5. Ֆրանսիա

Զբոսաշրջության աշխարհում Ֆրանսիան միշտ ճանաչվել է մշակութային, պատմական և գաստրոնոմիական հարստության էպիկենտրոն: WTTC-ի տվյալներով՝ երկիրը շարունակում է մնալ ամենահայտնի զբոսաշրջային ուղղությունը ամբողջ աշխարհում: Դա պայմանավորված է նրա բնական մեծ բազմազանությամբ, լանդշաֆտների գեղեցկությամբ, գյուղերի յուրահատուկ տեսքով, ինչպես նաև անսովոր հարուստ մշակութային ժառանգությամբ (թանգարաններ և պատմական հուշարձաններ): Բացի այդ, Ֆրանսիան զբոսաշրջությունից ստացված եկամուտներով երրորդ տեղն է զբաղեցնում ԱՄՆ-ից և Իսպանիայից հետո: Չնայած այն հանգամանքին, որ Ֆրանսիայի ամենահայտնի ուղղությունը Փարիզն է, Պրովանսը և Կոտ դ'Ազուրը, Լուարի հովիտը, Ատլանտյան օվկիանոսի ափի և հարավ-արևմտյան շրջանում, քսաներորդ դարի 90-ականներից սկսած օտարերկրյա զբոսաշրջիկների մեծ հոսք կա: Լուարի հայտնի ամրոցները, Մարսելի և Կասիի միջև ընկած գեղատեսիլ ծովածոցերը, Պիլա ավազաթումբը, ամենաբարձրը Եվրոպայում - Ֆրանսիայում շատ տեսարժան վայրեր կան: Դրանցից 38-ը ներառված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության օբյեկտների ցանկում: Դրանք ներառում են Մոն Սեն-Միշելն ու նրա ծոցը Նորմանդիայում, Վերսալի պալատի և զբոսայգու համույթը, Շարտրի տաճարը, Կարկասոնի միջնադարյան կենտրոնը և

այլն: Ֆրանսիայի մշակույթն արտասովոր է: Ֆրանսիայում գտնվող պատմական ու հնագիտական շրջանները հիանալի պատճառ են Ֆրանսիայի մշակութային զբոսաշրջության զարգացման համար: Լասկո քարանձավներից մինչև Վերսալյան դղյակ, Կլոդ Մոնեի այգին Ժիվերնիում և Եվրոպական ու միջերկրածովյան քաղաքակրթությունների թանգարանը Մարսելում. մեկնում են ուսումնասիրելու մի երկիր, որտեղ արվեստն ու պատմությունը սերտորեն միահյուսված են:

6. Հունաստան

Հունական երկրի ամեն մի անկյունում դրոշմված են դարավոր պատմության հետքերը՝ դասական, հելլենիստական, միջնադարյան, ինչպես նաև՝ բյուզանդական հուշարձաններ, ժողովրդական արվեստի գործեր, այլ քաղաքակրթությունների և կրոնների թողած վկայություններ, որոնց ազդեցությունն արտացոլված է ժամանակակից գեղարվեստական և ճարտարապետական ավանդույթներում: Հունաստանն իսկական դրախտ է մշակութային զբոսաշրջության համար, հիանալի ճանապարհորդություն դեպի պատմություն և արվեստ: Ուսումնական էքսկուրսիաները, թատերական ներկայացումները, փառատոնները, ուխտագնացությունների վայրերը, այցելությունները հնագիտական վայրեր, հուշարձաններ ու թանգարաններ, էքսկուրսիաները՝ ուսումնասիրելի բնական միջավայրը, ժողովրդական արվեստը և մշակույթը այն բազմաթիվ ուղղություններից են, որոնք Հունաստանը առաջարկում է մշակութային զբոսաշրջության ոլորտում:

Հունաստանը հայտնի է իր բնական գեղեցկությամբ և հետաքրքրաշարժ պատմությամբ: Հունաստանի տեսարժան վայրերը և հնագույն, հնագիտական վայրերը, անթիվ կղզիները, ավազոտ լողափերը և մեղմ միջերկրածովյան կլիման երկիրը դարձնում է Եվրոպայի լավագույն տուրիստական ուղղություններից մեկը:

Ակրոպոլիսը Աթենքի և Հունաստանի և իսկապես ողջ արևմտյան քաղաքակրթության խորհրդանիշն է: Այն բարձրանում է ժամանակակից մայրաքաղաքի սրտում՝ երեք հոյակապ տաճարներով, որոնք թվագրվում են մ.թ.ա. 5-րդ դարով:

Մետեորայի վանքերը ամենաանսովոր տեսարժան վայրերից են, որոնք պարզապես պետք է տեսնել Հունաստանում՝ ժայռեր՝ հսկայական սյուների տեսքով: Այն ցուցակված է որպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության օբյեկտ, դրանցից վեցը ներկայումս բաց են հանրության համար: Յուրաքանչյուր վանք հասնելու համար պետք է բարձրանալ ժայռի մեջ փորագրված քարե աստիճաններով մի քանի թռիչք:

2.1. Մշակութային զբոսաշրջությունը Հայաստանում

Մշակութային զբոսաշրջությունը Հայաստանում բազմազան է, քանի որ իսկապես տեսնելու շատ բան կա: Հայաստանն աշխարհի հնագույն քրիստոնեական պետությունն է: Դարերի ընթացքում այստեղ կառուցվել են վանքեր ու տաճարներ,

որոնք իրավամբ համարվում են համաշխարհային ճարտարապետության գլուխգործոցներ: Հին ճարտարապետությունը մեզ է հասել ոչ միայն տաճարների տեսքով, այլ նաև՝ նախաքրիստոնեական հնագույն հուշարձանների տեսքով (Գառնու հեթանոսական տաճար, խորհրդավոր Քարահունջ, ժայռապատկերներ, վիշապաքարեր): Հայաստանը՝ որպես բազմադարյա պատմություն ու հարուստ մշակույթ ունեցող երկիր, մշտապես հետաքրքրել և գրավել է օտարերկրյա զբոսաշրջիկներին: Դեռ միջնադարում Հայաստանում կառուցվել են իջևանատներ, քարավանատներ և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներ, որտեղ կանգ էին առնում Մետաքսի ճանապարհով անցնող առևտրականներն ու արհեստավորները: Նոր շրջանում Հայաստանում զարկ է տրվում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացմանը: 19-րդ դարի վերջից ռուսական տիրապետության տակ գտնվող հայկական գավառները՝ Երևանի և Ելիզավետպոլի նահանգները ու Կարսի մարզը, երկաթուղային հեռագրային կապ են հաստատում Հարավային Կովկասի այլ շրջանների միջև: Երևանում, Շուշիում, Գյումրիում ու Կարսում սկիզբ է դրվում հյուրանոցների շինարարությանը: ԽՍՀՄ տարիներին (1922-1991 թթ.) Խորհրդային Հայաստան են այցելում միութենական մյուս հանրապետությունների հարյուրավոր քաղաքացիներ՝ հիմնականում հանգստի կազմակերպման ու աշխատանքային նպատակներով: Հայաստանն ունի հազարավոր տարիների պատմություն, որի վկայությունն են երկրի տարբեր հատվածներում գոյություն ունեցող հայկական ճարտարապետական կոթողներն ու պատմամշակութային վայրերը: Դրանք կարելի է բաժանել չորս խմբի՝ նախնադարյան, հնադարյան, միջնադարյան և նոր ու նորագույն ժամանակների:

Հայկական լեռնաշխարհը եղելէ նախամարդու բնակեցման կարևոր օջախներից մեկը: Վրաստանի տարածքում հայտնաբերվել է Դմանիսի, Արցախում՝ Ազոխի, իսկ բուն Հայաստանի տարածքում՝ Արենիի քարանձավը: Վերջինս հայտնի է նաև որպես «Թռչունների քարանձավ»: Այստեղ հայտնաբերվել է աշխարհի ամենահին կոշիկը, որը թվագրվում է մ.թ.ա. 4-րդ հազարամյակին: Մշակութային տուրերը Հայաստանում հատկապես հետաքրքիր են հայկական ազգային խոհանոցի և ավանդական հյուրընկալության շնորհիվ: Հայաստանում մշակութային տուրերն առանձնահատուկ հատկանիշ են, քանի որ կան նաև այցելություններ տարբեր գինեգործարաններ, կոնյակի գործարաններ: Յուրաքանչյուր մարդ, անկախ տարիքից, մասնագիտությունից և հետաքրքրություններից, կարող է այստեղ գտնել այն, ինչն իրեն դուրս է գալիս:

Հայաստանում մշակութային զբոսաշրջությունը գլխավորում է հանգստի հանրաճանաչ տեսակների ցանկը: Ի վերջո, այստեղ իսկապես տեսնելու բան կա: Հայաստանը դարձավ աշխարհում առաջին երկիրը, որը պաշտոնապես ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն: Դա տեղի է ունեցել դեռևս 301 թվականին: Այս իրադարձությունն ազդեց երկրի մշակույթի վրա. դարերի ընթացքում հայկական հողի վրա կանգնեցվեցին վանքեր ու տաճարներ՝ ճարտարապետության իսկական գլուխգործոցներ: Երկրի պատմամշակութային ժառանգությունը խնամքով

պահպանվում և հավաքվում է ամենաարժեքավոր հավաքածուներում: Մեզ հասած այդ եզակի գտածոները, նկարները, գրքերը, արվեստի ու ճարտարապետության հուշարձանները այժմ հավաքվում են Հայաստանի թանգարաններում և ցուցադրվում են մշակութային ժառանգության բոլոր գիտակներին:Հայկական հայտնի թանգարանների մեծ մասը գտնվում է Երևանում: Դրանցից հատկապես կարելի է առանձնացնել Մատենադարանը՝ հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտը: Թանգարանի պահոցները պարունակում են ավելի քան 17,000 հնագույն ձեռագրեր և 100,000 հին արխիվային գրառումներ: Թանգարանի ամենահին ցուցանմուշը թվագրվում է մ.թ. 5-րդ դարով և բրածոյացված ձեռագիր է, որը պահվել է գետնի տակ մի քանի դար շարունակ: Թանգարանի հավաքածուներում կան ինչպես հայերեն, այնպես էլ այլ լեզուներով գրքեր՝ ռուսերեն, եբրայերեն, հունարեն, սիրիական, արաբերեն և այլն, այդ թվում՝ չօգտագործվողներ, մասնավորապես՝ լատիներեն: Մայրաքաղաքում է գտնվում նաև պետական Պատմության թանգարանը, որի շրջայցը ձեզ կբացի այս զարմանալի երկրի բարդ, բայց հետաքրքիր պատմությունը: Թանգարանի ցուցադրությունը ներառում է հնագույն տաղավարներ, ձեռագրեր, մետաղադրամներ և առարկաներ, որոնք մեծ նշանակություն ունեն մեր ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի ուսումնասիրության համար: Հավաքված ցուցանմուշների հավաքածուն ընդգրկում է հարյուրավոր և հազարավոր տարիների ժամանակաշրջան՝ համատեղելով նեոլիթյան շրջանի, կրակապաշտության, միջնադարի, ֆեոդալական վեճերի, նվաճողական պատերազմների և այլ նշանակալի պատմական իրադարձությունների գտածոները:

Փառատոնները որպես մշակութային զբոսաշրջության բաղադրիչ

Փառատոներով առավել ակտիվ կենտրոն է համարվում մայրաքաղաք Երևանը: Երևանը ՀՀ-ի զբոսաշրջության շուկայում կարևոր դեր և նշանակություն ունի այն ոչ միայն բազային զբոսաշրջային կենտրոն է, այլև պետության հիմնական մշակութային և զբոսաշրջային ենթակառուցվածքների կենտրոն է: Մայրաքաղաք Երևանում զբոսաշրջության զարգացմանը նպաստել է ինչպես համաշխարհային զբոսաշրջության առաջընթացը, այնպես էլ քաղաքի յուրօրինակ գրավչությունը՝ որպես գրավիչ զբոսաշրջային քաղաք ձևավորելու և զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով արդեն շուրջ վեց տարի Երևանում անցկացվում են փառատոններ, որոնք միտված են հանրահռչակելու հայկական ավանդույթները և քաղաք այցելող զբոսաշրջիկներին ներկայացնելու երևանյան յուրատեսակ մթնոլորտը: Հայաստանում, մասնավորապես Երևանում անցկացվող փառատոններից են.

«Երևանի գինու օրեր »

«Երևանի գինու օրեր» փառատոնը անցկացվում է հունիսին՝ խթանելով զբոսաշրջության զարգացումը: Փառատոնի գլխավոր կազմակերպիչ «Էվենտտուրա»

ընկերությունը մայրաքաղաքի Սարյան փողոցի Թումանյան և Պուշկին խաչմերուկների հատվածում երկու օր շարունակ երևանցիներին և զբոսաշրջիկներին ներկայացնում է հայկական գինեգործության հնագույն ավանդույթները: Միջոցառման գլխավոր նպատակն է բարձրացնել հայկական գինիների ճանաչելիությունը, խթանել Հայաստանի զբոսաշրջության զարգացմանը և ապահովել մեր երկրի՝ որպես գինու հնագույն օրրանի ճանաչելիության բարձրացումը: Միջոցառման այցելուներին Հայաստանի լավագույն գինի արտադրողները ներկայացնում են գինիների շուրջ 200 տեսակ, իսկ մայրաքաղաքի լավագույն ռեստորաններն ու սրճարաններն առաջարկում են հայկական և արտասահմանյան խոհանոցների լավագույն ուտեստները:

«Ուտեստ ֆեստ Երևան»

Սկսած 2015 թվականից յուրաքանչյուր տարվա հունիսին անցկացվում է «Համով-հոտով Երևան» խորագրով տոնածիսական ուտեստների փառատոնը: Այս փառատոնի նպատակն է հանրությանը, այդ թվում նաև՝ Երևան այցելած զբոսաշրջիկներին ներկայացնել հայկական ավանդական տոնածիսական ուտեստի հարուստ ընտրանին: Հայկական ավանդական տոնացույցին զուգահեռ բազմաթիվ են այն ավանդական տոները, որոնք ուղեկցվում են հետաքրքիր ուտեստներով՝ ներկայացնելով ազգային ավանդական կերակրատեսակները: Փառատոնի մասնակից դարձած երևանցիներն ու զբոսաշրջիկները հնարավորություն ունեն ծանոթանալու և համտեսելու հայկական խոհանոցային ժառանգության լավագույն ու մոռացված ուտեստները: «ԵրևանՏարազ ֆեստ» Սկսած 2015 թվականից ամեն տարվա օգոստոսին Երևանի քաղաքապետարանի տուրիզմի բաժնի կողմից մայրաքաղաքում անցկացվում է «ԵրևանՏարազ ֆեստ» փառատոնը, որի շրջանակներում հայ լավագույն դիզայներները ներկայացնում են իրենց աշխատանքները՝ օգտագործելով ազգային հագուստի ավանդական տարրեր: Միջոցառումը հնարավորություն է տալիս վերադառնալու արմատներին և միևնույն ժամանակ՝ նորովի ներկայացնելու հայկական ավանդույթները:

Գառնու հեթանոսական տաճար (Կոտայքի մարզ)

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո Մերձավոր Արևելքում հելլենիզմի (հունականության) դարաշրջանին են վերագրվում սակավաթիվ հուշարձաններ,

որոնցից առավել լավ պահպանված է Միհր Աստծուն նվիրված Գառնու հեթանոսական տաճարը: Այն կառուցվել է մ.թ.ա. 77 թվականին: Գտնվում է Կոտայքի մարզի Գառնի գյուղում: Գառնու հեթանոսական տաճարին կից կառուցվել են նաև արքունի ամառանոցն ու հռոմեական բաղնիքը: Այս ամենի շուրջ էլ հիմնվել էր Գառնու ամրոցը:

Գեղարդի վանական համալիր (Կոտայքի մարզ)

Վանական համալիրը գտնվում է Կոտայքի մարզի Գողթ գյուղում՝ Ազատ գետի վերին հոսանքում: Այն կառուցվել է վաղ միջնադարում՝ մի վայրում, որը նախաքրիստոնեական շրջանում ծառայել է որպես սրբատեղի: Այդ աղբյուրներից մեկն այսօր էլ պահպանվում է վանքի գլխավոր գավթի ներսում: Ըստ ավանդության, առաջին եկեղեցին հիմնվել է 4-րդ դարի սկզբին, երբ Հայաստանում քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն: Վանքի հիմնադրումն ավանդաբար վերագրում են հայոց առաջին կաթողիկոս Գրիգոր Լուսավորչին, իսկ հետագա բարգավաճումը՝ Սահակ Պարթևին: Ավելի ուշ շրջանում վանքը հռչակվեց նաև իբրև գրչության կենտրոն, դպրանոց, երաժշտական ակադեմիա: Այստեղ է պահվել հայտնի գեղարդը, որով հռոմեացի զինվորը ծակել է Քրիստոսի կողը: Այն Հայաստան էր բերել քրիստոնեության առաջին քարոզիչներից Թադեոս առաքյալը: Այժմ գեղարդը գտնվում է Վաղարշապատում՝ պատմության թանգարանում:

Էջմիածնի Մայր տաճար (Արմավիրի մարզ)

Էջմիածնի Մայր տաճարը գտնվում է Արմավիրի մարզի Վաղարշապատ քաղաքում: Այն Հայ Առաքելական եկեղեցու Էջմիածնի կաթողիկոսության գլխավոր կրոնական կառույցն է: Եկեղեցին կառուցվել է 4-րդ դարի սկզբին՝ 301-303, թվականներին քրիստոնեությունը պետական կրոն ընդունելուց հետո, Գրիգոր Լուսավորչի կարգադրությամբ: Կառուցվել է նախապես գոյություն ունեցող գոյություն ունեցող տաճարի տեղում՝ խորհրդանշելով հեթանոսությունից քրիստոնեության անցումը: Ներկայիս կառույցի հիմնական մասը կառուցել է Վահան Մամիկոնյանը 483 թվականին՝ պարսկական ներխուժման ժամանակ խիստ վնասվելուց հետո: Կառուցումից հետո մինչ հինգերորդ դարի երկրորդ կեսը տաճարը Ամենայն Հայոց Կաթողկոսների նստավայրն էր: Ըստ գիտնականների՝ անտիկ Հայաստանի առաջին Մայր տաճարն է և համարվում է աշխարհի ամենահին Մայր տաճարներից մեկը:

Զվարթնոցի տաճար

Զվարթնոցի տաճարը 7-րդ դարի կառույց է, որը կառուցվել է Ներսես Գ Տայեցի կաթողիկոսի պատվերով՝ 641-661 թվականներին: Կառուցվել է այն ժամանակ, երբ Հայաստանը գտնվում էր բյուզանդական տիրապետության տակ: Այդ ժամանակ նոր էին սկսվել արաբական արշավանքները: Մայր տաճարի շինարարական աշխատանքները սկսվել են 643 թվականին՝ Ներսես Շինարարի առաջնորդության տարիներին: Այժմ պահպանվել են միայն Զվարթնոցի տաճարի ավերակները, որոնք հայտնաբերվել են Արմավիրի մարզում՝ Վաղարշապատ քաղաքի եզրին: Զվարթնոցի տաճարը տպավորիչ չափսերի եզակի ճարտարապետական կառույց էր: Ժամանակին բնորոշ խաչաձև գմբեթավոր կամ բազիլիկային տիպի կառուցվածքի փոխարեն Զվարթնոցը ներկայացնում էր բոլորովին նոր ոճ: Եռաստիճան՝ հաջորդաբար նվազող

երեք գլանաձև ներդաշնակ ծավալների միասնական շինությունն իր ժամանակի ամենաբարձր կառույցներից էր (45-49 մ): Տաճարը ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության օբյեկտների ցանկում:

Արտաշատ պատմական մայրաքաղաք (Արարատի մարզ)

Արտաշատը Հին Հայաստանի մայրաքաղաքն էր մ.թ.ա. 176 թվականից և այդպես մնաց թագավորության պատմության ավելի քան 300 տարիներին: Քաղաքը գտնվում է Արարատի մարզում: Այժմ մարզի մարզկենտրոնն է: Մ.թ.ա. մոտ 200 թվականին Արտաշես I-ը Սելևկյան տիրակալ Անտիոքոս III-ի (մ.թ.ա. 222-187 թթ.) աջակցությամբ դարձավ Սելևկյան կայսրության սատրապը Հայաստանում: Արտաշեսը թագադրվեց մինչև մ.թ.ա. 165 կամ 160 թվականները և հիմնեց Արտաշեսյանների տոհմը, որը Հայաստանը կկառավարեր մինչև մ.թ.ա. 1-ին դարի առաջին տասնամյակը: Մ.թ.ա. 176 թվականին Արտաշեսը Արաքս գետի երկայնքով ինը բլուրներից բաղկացած թերակղզում հիմնեց իր նոր մայրաքաղաք Արտաշատը: Այն իդեալական էր պաշտպանության համար, երեք կողմից շրջապատված էր ջրով և հետագայում պաշտպանվել է Խոր Վիրապ հրվանդանով:

Դվին պատմական մայրաքաղաք (Արարատի մարզ)

Դվին պատմական մայրաքաղաքը կառուցվել է մայրաքաղաք Արտաշատից ոչ շատ հեռու Խոսրով Կոտակ թագավորի օրոք (330-338 թթ): Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինի ավերակները գտնվում են Արտաշատ քաղաքի հարևանությամբ: Դվինն իբրև բնակավայր՝ հայտնի է Ք.ա. III հազ.: Ք.ա. VIII դ. բնակավայրը ենթարկվեց հարձակման՝ Արարատյան դաշտ ներխուժած ուրարտացիների կողմից: Հուշարձանի ստորին շերտերում ամենուրեք նկատելի են հրդեհի և ավերածությունների հետքերը: Հելլենիստական և անտիկ դարաշրջանում Դվինն Արտաշատ մայրաքաղաքի արվարձաններից էր, նրա տնտեսական մատակարարներից մեկը: Քաղաքն ընդգրկել է մոտ 400 հա տարածք: Ամենածաղկուն շրջանում բնակչությունը կազմել է 100.000-150.000: Հնավայրի կենտրոնական հատվածում բարձրանում է մի բլուր, որի գագաթին հիմնարկվել է քաղաքի միջնաբերդը՝ հզոր պարիսպներով, 40-ից ավելի կիսաբոլոր աշտարակներով: Միջնաբերդը բոլոր կողմերից գոտևորել են քաղաքային ընդարձակ թաղամասերը: Քաղաքային թաղամասերը ևս պարսպված են եղել հզոր պարիսպներով, որոնց մասին տեղեկացնում է արաբ պատմիչ և աշխարհագիր Մուկադասին: 470-ական թվականներից սկսած՝ քաղաքը համարվում էր և հայոց հոգևոր կենտրոնը, (կաթողիկոսությունը Վաղարշապատից Դվին տեղափոխվեց Գյուտ կաթողիկոսի օրոք), ուր շուրջ 400 տարի նստել են Հայոց հայրապետները:

Զորաց քարեր (Սյունիքի մարզ)

Քարահունջը կամ Զորաց քարերը գտնվում է Սյունիքի մարզի Սիսիան քաղաքում: Այն համարվում է աշխարհի հնագույն աստղադիտարանը: Մեգալիթյան կառույց է: Թարգմանաբար մոտ է անգլիական Սթոունհենջին, սակայն այն ավելի հին է, քան Սթոունհենջը:

Նորավանք (Վայոց ձորի մարզ)

Նորավանք վանական համալիրը 13-րդ դարի վերջերից Սյունյաց մետրոպոլիտների աթոռանիստն ու Օրբելյան զորեղ իշխանական տան դամբարանավայրն էր, որը նշանավոր է ոչ միայն իր պատմությամբ, այլև հարուստ մշակութային ժառանգությամբ՝ որպես ճարտարապետության, քանդակագործության, վիմագրության, գրչության և մանրանկարչության խոշոր կենտրոն: Նորավանքը ժամանակի մշակութային խոշոր ուսումնակրթական և գրչության կենտրոն էր՝ սերտորեն կապված հոգևոր ու կրթական այնպիսի կենտրոնների հետ, ինչպիսիք էին Գլաձորի համալսարանը, Տաթևի վանքը: Սակայն Եսայի Նչեցու գլխավորած Գլաձորի համալսարանից բացի գործում էր նաև Վերին Նորավանքի բարձր տիպի դպրոցը՝ Դավիթ րաբունապետի գլխավորությամբ: Ե՛վ Գլաձորը, և՛ Վերին Նորավանքը ոչ միայն ուսումնական, այլև գրչության խոշոր կենտրոններ էին, որտեղ տասնյակներով ձեռագրեր էին գրվում ու պատկերազարդվում: Վանքի անունը բառացիորեն թարգմանվում է որպես «նոր վանք», բայց այսօր վանքի անունը չի համապատասխանում իրականության: Նորավանքը կառուցվել է 13 դարում: Վանքը կանգնած է Արփա գետի կիրճում՝ ձորում գտնվող կարմիր ժայռերի կողքին: Սրանք տեսարանն էլ ավելի տպավորիչ են դարձնում: Երկու եկեղեցին և մատուռը, շրջապատող բացառիկ լանդշաֆտը գրավում են զբոսաշրջիկներին ամբողջ աշխարհից: Տուրիստական ընկերություններն առաջարկում են տեսարժան վայրերի շրջայցերի հետաքրքիր և օպտիմալ փաթեթներ: Օրինակ՝ Նորավանք այցելելով՝ կարող եք նույն օրը տեսնել նաև Խոր Վիրապի վանքը, Քարահունջը, Տաթևը և այլն:

Հաղպատ

Հաղպատ վանական համալիրը գտնվում է Լոռու մարզի համանուն գյուղում՝ Դեբեդ գետի աջակողմյան բարձրադիր լեռնահարթակի վրա: 10-13-րդ դարերում համարվում էր Հայաստանի խոշորագույն հոգևոր-մշակութային և գիտակրթական կենտրոններից մեկը: Հաղպատ և Սանահին վանական համալիրները գրանցված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցանկում:

Հաղպատ վանական համալիրը համարվում է Հայաստանի ամենաերկարակյաց գործող հոգևոր ու մշակութային օջախներից մեկը: Նրա տարեգրությունը 1000 տարուց ավելին է: Այդ ժամանակաշրջանի մասին են վկայում վանքի պատերին փորագրված վիմագրությունները՝ տալով անգնահատելի տեղեկություններ վանքի և ժամանակաշրջանի պատմական, քաղաքական, հոգևոր-մշակութային կյանքի մասին:

Սանահին

Սանահին վանական համալիրը գտնվում է Հայաստանի Լոռու մարզի Ալավերդի քաղաքից դեպի հարավ՝ Դեբեդ գետի աջակողմյան բարձրադիր սարահարթի վրա: Կա վարկած, որ Սանահին անունը ստացել է Հաղպատի վանքի կառուցումից հետո՝ «սա քան զնա հին» իմաստով: Եղել է հայ միջնադարյան հոգևոր-մշակութային և գիտակրթական խոշոր կենտրոն: Սանահին և Հաղպատ վանական համալիրները

համարվում են ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության օբյեկտ: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ վանքը ոչ թե հիմնադրվել է 10-րդ դարում, այլ վերակառուցվել է նախկին եկեղեցու ավերակների վրա, իսկ վերակառուցումից հետո անվանվել Սբ. Աստվածածին: Հետևաբար վանքը մինչ այդ արդեն ունեցել է կրոնավորների խումբ, գրչատուն. սակայն լայն տարածում է գտել միայն 10-րդ դարում, իսկ համբավն ու հեղինակությունը մեծացել են Ամենափրկիչ եկեղեցու կառուցումից հետո: Սանահին վանական համալիրի կազմում են չորս եկեղեցիները՝ Սբ. Աստվածածին և Սբ. Ամենափրկիչ՝ իրենց գավիթներով, ինչպես նաև՝ Սբ. Հակոբ և Գ. Լուսավորիչ եկեղեցիները: Առանձին ուշադրության են արժանի նաև զանգակատունն ու գրատունը: Վանքում են գտնվում Կյուրիկյանների, Զաքարյանների և Արղության-Երկայնաբազուկների տոհմական դամբարանները: Հատուկ կարևորություն ունեն աղբյուրների շենքերն ու գեղաքանդակ խաչքարերը:

SWOT Վերլուծություն

Սվոթ վերլուծության նպատակն է հասկանալ Հայաստանում մշակութային զբոսաշրջության ուժեղ ու թույլ կողմերը, հասկանալ, թե ինչ հնարավորություններ ու խոչընդոտներ կան Հայաստանում մշակութային զբոսաշրջության զարգացման համար:

S - Ուժեղ կողմեր

1. Հայաստանում կան շատ պատմամշակութային վայրեր, որոնք նպաստում են ոլորտի զարգացմանը:

2. Ունենք թե՛ բնածին և թե՛ մարդածին հուշարձաններ, որոնք կարող ենք որպես օգտակար ռեսուրս՝օգտագործել մշակույթի պահպանման և մշակութային զբոսաշրջության զարգացման համար:

3. Ունենք շատ թանգարաններ, որոնք ներկայացնում են մեր մշակույթն ու արվեստը:

W - Թույլ կողմեր

1. Զբոսավարների սպասարկման մեջ կան թերություններ, որը կարող են նպաստել ոլորտի մակարդակի իջեցմանը:

2. Չունենք բավարար ֆինանսներ՝ երկրի զբոսաշրջությունը զարգացնելու համար, կամ ունենք, սակայն չեն օգտագործվում այնպես ինչպես որ հարկն է:

3. Չկա այն կրթվածության մակարդակ, որպեսզի մարդիկ սկսեն հասկանալ ու խնայողաբար և հետևողական վերաբերվել իրենց մշակութային կոթողներին, գնահատել դրանք ու պահեն դարերից եկած ժառանգությունը։

O - Հնարավորություններ

1. Մշակութային զբոսաշրջությունը զարգացնելով՝ երկիրը հնարավորություն կունենա ավելի ճանաչված, տարածված և հայտնի դառնալ։

2. Կարծում եմ, որ հնարավորություն կլինի արտագաղթը կանխարգելել, քանի որ այս ոլորտի զարգացումը կբերի նաև երկրի տնտեսության զարգացմանը և հասարակության մտածելակերպի բարձրացմանը։

T - խոչընդոտներ

1. Խոչընդոտներ կարող են առաջանալ զբոսավարների հետ։

2. Ճանապարհների անսարքության հետ։

3. Մշակութային կոթողները վնասող մարդիկ են հիմնականում խոչընդոտ են հանդիսանում, քանի որ շատ քչերն են հասկանում, որ դա մեր մշակույթի մի մասն է, ու չի կարելի այդ ժառանգությունը վերացնել։

Գործնական մաս

Գործնական աշխատանքը բաղկացած է երեք մասից։ Առաջին մասում իրականացրել ենք հետազոտական աշխատանք (հարցում), որը ուղղված էր Հայաստանում մշակութային զբոսաշրջության ոլորտում աշխատող զբոսավարներին, զբոսաշրջության գործակալությունների տնօրեններին։ Հարցման նպատակն էր հասկանալ, արդյո՞ք մշակութային զբոսաշրջությունը զարգացած է Հայաստանում, դրա հիմնական ուղղությունները, ի՞նչ խնդիրներ կան, որոնք կարող են խանգարել մշակութային զբոսաշրջությանը, և երթուղիներ, որոնք իրենք կառաջարկեին, որոնք այդքան էլ ակտուալ չեն։ Հարցման արդյունքներից ելնելով, կարող ենք նշել, որ Հայաստանում մշակութային զբոսաշրջության հիմնական ուղղություններն են Գառնի, Գեղարդ, Նորավանք, Տաթևի վանք, Հաղպատ, Սանահին, Էջմիածին, Հաղարծին, Խոր Վիրապ, Հովհանավանք, Օձուն։ Իսկ, թե ի՞նչ խնդիրներ են առաջացել, որոնք խանգարել են մշակութային զբոսաշրջությանը, հիմնական խնդիրներից, արդյունքներից կարող ենք նշել սանհանգույցների խնդիրը, որոնց բացակայությունը նկատվում է ոչ միայն մշակութային կոթողների շրջակայքում, այլ նաև գրեթե ամբողջ Հայաստանում։ Մյուս խնդիրներից են այն մշակութային կոթողները, որոնք չեն գործում, սննդի կետերի բացակայությունը որոշ հատվածներում։ Նաև որոշ եկեղեցիներ և վանքեր քանդվելու եզրին են և մատնված են անուշադրության։ Հիմնականում ամենամեծ խնդիրներից են ճանապարհաշինարարական աշխատանքները։ Պետական վերահսկողություն կա, սակայն մասամբ։ Եթե տարվում են ճանապարհաշինարարական աշխատանքներ, ապա պետք է նախօրոք տեղեկացվի տուրիստական գործակալություններին, որպեսզի տուր-փաթեթների մեջ որոշ ժամանակ այդ ուղղությունը չներառվի։ Առանձնացված ուղղությունների փոքրիկ ցուցակ, որն առաջարկվում է ներառել որպես նոր ուղղություն.

Սյունիքի հարավային շրջան՝ Մեղրի, Սյունիք Բերդ, Տավուշի մարզ Թալինի ուղղությունները Գեղարքունիքի ուղղությունները Քայլարշավային երթուղիներ Վայոց ձորում, Սյունիքում Ագարակի հնավայր Երևանի գինու օրերին Մխիթար Սեբաստացի կրթահամալիրը մասնակցել է փառատոնին՝ ներկայացնելով իր սեփական գինին, որը պատրաստվում է կրթահամալիրի սովորողների կողմից։ Գործնական աշխատանքի երկրորդ մասում մենք անդրադարձել ենք փառատոնին և կատարել ուսումնասիրություն, քանի որ փառատոնը ևս մշակութային զբոսաշրջության մի մասն է: Հունիս ամսին Երևանում Գինու օրերն են, սկսվում է հետաքրքիր իրարանցում, երաժշտություն, գինի, զբոսաշրջիկներ, ովքեր վայելում ու ծանոթանում էին հայկական գինիների տարբեր տեսակների հետ։ Իսկ օրվա վերջում չենք մոռանում մեր ազգային պարերն ու զբոսաշրջիկների հետ միասին անցկացնում գինու օրերը Երևանի մի քանի փողոցներում։ Մշակութային զբոսաշրջության շրջանակներում, գինու փառատոնի ընթացքում, եղել եմ որպես կազմակերպիչ, որի ժամանակ ուսանողների խմբով այցելել ենք Հայաստանի պատմության թանգարան,

որտեղ ծանոթացել ենք հայկական մշակույթի հետ, որից հետո շրջայց ենք կատարել Երևանի հին փողոցներով և արդեն միացել գինու փառատոնին։ Փառատոնը ևս մշակութային զբոսաշրջության ճյուղ է, ամեն տարի իրականացվող փառատոնների միջոցով է, որ մշակութային զբոսաշրջությունը զարգանում է, քանի որ ամեն տարի ունենում ենք մեծ թվով զբոսաշրջիկներ, ովքեր մասնակից լինելով յուրաքանչյուր փառատոնի, ծանոթանում են հայկական մշակույթի ու պատմության հետ։ Գործնական աշխատանքի երրորդ մասում իրականացրել ենք ճամփորդություն դեպի Լոռու մարզ, բացահայտելու Լոռվա մշակութային ուղղություններն ու զարգացման նախադրյալները։ Կազմել ենք երթուղի, որից հետո արդեն իրականցրել ենք ճամփորդությունը փոքրիկ խմբով։ Այցելել ենք Լոռե Բերդ, որը հայտնի ուղղություն է զբոսաշրջիկների համար Լոռվա մարզում։ Այցելել ենք ռուսական Սբ. Նիկոլայ հրաշագործ եկեղեցի, որը գտնվում էր վերանորոգման մեջ, իսկ բնակիչներից մեզ սիրով ներկայացրեցին եկեղեցու մասին։ Քանի որ ծանոթությունը գյուղացիների ապրելակերպի հետ ևս համարվում է մշակույթ, մշակութային զբոսաշրջություն, մենք այցելեցինք Լոռու մարզի Կուրթան գյուղ, որտեղ ունեցանք փոքրիկ հարցազրույց այնտեղ բնակվող զբոսաշրջիկի, ինչպես նաև տեղի բնակիչների հետ։ Ծանոթացանք մի գյուղացի պապիկի հետ, ով մեզ առաջարկեց միասին ցանք անել միասին։ Ցանեցինք, միացանք հողի հետ տարվող աշխատանքներին, փորձեցինք հասկանալ գյուղացու կյանքը, նրա ապրելակերպը։ Այնուհետև ուղևորվեցինք Դորբանդավանք, որը իրականում այդքան էլ զբոսաշրջային հայտնի կենտրոն չէ, ու ոչ բոլորը գիտեն այդ վանքի մասին, այն գտնվում է Վրաստանի հետ սահմանի վրա։ Այցելել ենք նաև Ստեփանավանում գտնվող փոքրիկ եկեղեցին՝ Սուրբ Սարգիսը։ Այցելել ենք Վրաստանի սահմանին գտնվող Դորբանդավանքը, որը այդքան էլ հայտնի չէ զբոսաշրջային փաթեթներում և գրեթե չի առաջարկվում։

Եզրակացություն

Հայաստանն ունի մեծ ներուժ մշակութային զբոսաշրջության զարգացման համար։ Բոլոր տուրիստական գործակալություններն իրենց տուր-փաթեթների մեջ ունեն ներառած մշակութային վայրեր։

Բացի այն, որ ունենք մեծ պատմական ժառանգություն, մեծ թվով վանքեր, եկեղեցիներ, թեկուզ դրանցից շատերը գտնվում են ավերված կամ կիսավեր վիճակում, դրանք շարունակում են մնալ Հայաստանի մշակույթի մի մասը։ Մշակութային զբոսաշրջությունը զբոսաշրջության ամենագլխավոր ճյուղն է, և քանզի Հայաստանում զբոսաշրջության տեսակներից ամենատարածվածն է, մեզ մնում է միայն պահպանել մեր ժառանգությունը։ Ժառանգություն ասելով՝ նկատի ունենք ոչ միայն վերակառուցել ավերված վանքերն ու եկեղեցիները, այլև չկորցնել մեր ազգային պարերն ու երգերը, որոնք մեր մշակույթի մի մասն են կազմում։ Մշակույթը պահպանելու համար նաև պետք է սովորենք ու լավ պատկերացում կազմենք մեր պատմությունից, քանի որ ամեն ինչ կախված է զբոսավարների ներկայացրած ճշգրիտ տեղեկություններից, որի մասին տեղեկանում են բոլոր զբոսաշրջիկները։

Գրականության ցանկ

1. https://www.routledge.com/Cultural-Tourism-Global-and-Local-Perspectives/Richards/p/book/9780789031174 23.10.2023
2. https://tourlib.net/books_tourism/bagdasarova11.htm 26.10.2023
3. https://dteducation.com/presscenter/text/articles/kulturnyj-shok-chto-eto-takoe-i-kak-s-etim-borotsya/ 01.11.2023
4. https://www.culturepartnership.eu/am/article/how-to-increase-the-cultural-potential-of-armenia20.11.2023
5. https://www.ukessays.com/essays/cultural-studies/importance-of-culture-tourism-cultural-studies-essay.php 10.12.2023
6. https://studycorgi.com/cultural-tourism-as-a-niche-market/ 15.12.2023
7. https://dzen.ru/a/Ymuuu0yKPUkHJQZ6 05.01.2024
8. https://www.igi-global.com/dictionary/electronic-word-of-mouth-and-tourist-satisfaction-in-rural-tourism-in-schist-villages/39259 10.01.2024
9. https://tourismteacher.com/cultural-tourism/ 12.01.2024
10. https://studycorgi.com/cultural-tourism-as-a-niche-market/ 16.01.2024
11. https://www.worldpackers.com/articles/cultural-tourism 13.02.2024
12. https://www.tutu.ru/geo/greece/article/sights/ 09.02.2024
13. https://iran.ru/news/culture/71989/Turizm_v_Irane 12.04.2024
14. https://www.tatever.am/am/tatev-monastery-complex 22.04.2024
15. https://asue.am/am/amberd/publication/analytics/impact-of-tourism-is-positive-or-negative-the-need-for-sustainable-tourism- 27.04.2024